

քրիստոնէական աւխարհին մէջ տակաւին հազիւ կը հանչուէր:

Եւզոկսիա Թեոդոս Բ. ի քաղուհին էր, որ իբր ախարական Երուսաղէմ կը բնակէր Յ. դարուն. ան Ս. Տեղեաց համար ունէր ջերմեռանդ նախանձաւորութիւն մը եւ շինեց բազմաթիւ հաստատութիւններ. նոր ո՞ն մը գործածուեցաւ շինութեանց մէջ: Եւզոկսիան էր որ շինել տուաւ Ս. Ստեփանոսի, Պրոպատիկէի եւ Սելովամի գմբէթածել եկեղեցիները, ինչպէս նաեւ Ս. Յովնանու Մկրտչի երեք կողակով եկեղեցին. մինչեւ Զ. դարու կիսուն եկեղեցիները շինուած են Եւզոկսիա քաղուհիին նախընտրած հարտապետական ոճով. Յուսիսիանոս նոյն ոճին կու տայ նոր կեանք մը եւ Երուսաղէմը կը դառնայ Մասապայի Մոզայիքի Սուրբ Բարսիլ:

Մինչեւ է. դարու սկիզբը քե՛ կը պահպանուին Դ. դարէն սկզբնաւորուած եկեղեցեաց շինութիւններն ու վանքերը եւ քեկ՝աւելնան նորեր ալ. այս կերպով Երուսաղէմ Դ.էն մինչեւ Զ. ի վերջը եկեղեցիներով ու վանքերով զարդարուն քաղաք մը կը դառնայ. իսկ Երուսաղէմի Անապատ կը բարձրանան մեծամեծ եւ փոքր վանքեր՝ պահպանելով հանդերձ մենակեացներու հազարաւոր խրճիթները փապարներու բնական այրերու մէջ:

Այս վանական շինութիւններու ոճը միածել էր. վանքերը կ'ունենային ընդհանրապէս կանոնաւոր մեծութեամբ տաշուած եւ բանձր քարերով շինուած աւտարակ մը, որ կ'ունենար մի եւ նոյն ոճը եւ ներքնապէս ունէր անցքեր, սանդուխներ, ստորեկրեայ տեղեր. վանքը իր դիմացը կ'ունենար եկեղեցի մը կորնքական խոյակներով եւ բիւզանդական սիւներով. կամարները կամ առաստաղները կ'ըլլային կամարակապ եւ յասակը մոզայիքներով:

Առանց պատճառի չէր որ վանականները իրենց աղբասիկ բրնակարանները կը վերածէին բերդի. կրօնական շփոթները, Հրէից եւ Սամարացոց ապստամբութիւնները, Արաբացոց եւ Պարսից արշաւանքները չէին դադրէր Պաղեստինը խռովելէ, մինչեւ այն որոշ արշաւանքին՝ որ խլեց յունական կայսրութենէն այս գեղեցիկ եւ նշանաւոր գաւառը:

614ին Պարսիկները իրենց արշաւանքին ժամանակ Երուսաղէմ մը կրակի տուին եւ այրեցին ու քանդեցին բոլոր սրբավայրերը: Երբ 627ին Տիգրիսի հովտին մէջ Բիւզանդացի յարեցիկ Պարսիկներուն եւ Պարսից քաղաւոր Խոսրովը մեռնելով Պարսիկները քաշ-